ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Աբգիշտիի 1

№ 676-Ա « 22 » մարտի 2023թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի Հ.605-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասով և 52-րդ հոդվածի 1-ին մասի 1.1-ին կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով.

1. Երևանի քաղաքապետի 2022 թվականի փետրվարի 21-ի «Երևանի քաղաքապետի տեղակալների և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի միջև պարտականությունների բաշխում կատարելու մասին» N 605-Ա որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Երևանի քաղաքապետի տեղակալների և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի միջև կատարել աշխատանքների (պարտականությունների) հետևյալ բաշխումը.

1) Երևանի քաղաքապետի 1-ին տեղակալ՝ համակարգում և վերահսկում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման, գնումների, ֆինանսական, զարգացման և ներդրումային ծրագրերի, հանրակրթության վարչությունների աշխատանքները.

2) Երևանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Ավինյան՝ համակարգում և վերահսկում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության, շինարարության և բարեկարգման, մշակույթի և տուրիզմի, կոմունալ տնտեսության, տրանսպորտի վարչությունների, Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների աշխատանքները, Հայաստանի Հանրապետության կառավարության և Երևանի քաղաքապետարանի կողմից համատեղ իրականացվող ենթակառուցվածքային ծրագրերի կատարումը.

3) Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյան՝ համակարգում և վերահսկում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական, առևտրի և ծառայությունների, արտաքին ձևավորման և գովազդի, երեխաների և սոցիալական պաշտպանության վարչությունների աշխատանքները.

4) Երևանի քաղաքապետի տեղակալ Ստեփան Մաչյան՝ համակարգում և վերահսկում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների, քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժնի աշխատանքները.

5) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ համակարգում և վերահսկում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության, քարտուղարության, մատակարարման և տեխնիկական սպասարկման ծառայության, առաջին և զորակոչային հարցերի կազմակերպման բաժնի աշխատանքները:»:

2. Որոշման հավելվածով սահմանված ցանկում՝

1) 16-րդ, 174-213-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել.

2) 214-րդ կետից հետո լրացնել նոր՝ 214.1-ին կետ.

214.1.	«Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ

3) 236-րդ կետից հետո լրացնել նոր՝ 237- 241-րդ կետեր.

237.	«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ
238.	«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» հիմնարկ
239.	«Ջրային կառույցների» ՓԲԸ
240.	«Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ
241.	«Երևանի ավտոբուս» ՓԲԸ

3.Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

X

ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Signed by: HOVHANNISYAN LEVON 2903880441